Խաժակ Մուշեղի Վարաժյան

Ծնվել է 1983 թվականի հունվարի 5-ին Լենինական քաղաքում:

Հայրը՝ Մուշեղ Խաժակի Վարաժյանը, եղել է տեխնիկական գիտությունների թեկնածու, մայրը՝ Աիդա Սարիբեկի Վարաժյանը՝ մանկավարժ:

1989 թվականին ընդունվել է Լենինականի թիվ 14 դպրոց, ապա կրթությունը շարունակել է Գյումրու թիվ 2 դպրոցում և ցուցաբերել է գերազանց առաջադիմություն:

1997-1999 թվականներին սովորել է ՀՊՃՀ ԳՄ «Տեմպ» հենակետային վարժարանում:

1999-2003 թվականներին ընդունվել և ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզմաթ ֆակուլտետի մաթեմատիկայի բաժինը «Մաթեմատիկա» մասնագիտությամբ, շնորհվել է մաթեմատիկայի բակալավրի աստիճան:

2003-2005 թվականներին ծառայել է Հայոց բանակում:

2006-2014 թվականներին աշխատել է «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ-ում որպես վարկային մասնագետ:

2016 թվականից հանդիսանում է «Նովոստրոյ» ՍՊԸ-ի հիմնադիր-տնօրեն:

2021 թվականից Գյումրու համայնքի ավագանու «Բալասանյան դաշինք» խմբակցության անդամ:

Ամուսնացած է, ունի 2 դուստր: